

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Էդուարդ Մարտիրոսյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրեն

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Ավստրիա, քաղաք Վիեննա, սեպտեմբերի 15-ից 19-ը, 2025թ.

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր համաժողովի 69-րդ նստաշրջանին

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր համաժողովը ամենամյա խոշորագույն և նշանակալի միջոցառումն է միջուկային էներգետիկայի և անվտանգության ոլորտում: Գլխավոր համաժողովը, որը գումարվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբերին Վիեննայում, հանդիսանում է այն եզակի միջազգային հարթակը, որտեղ գործակալության անդամ պետությունները՝ անկախ իրենց աշխարհագրական դիրքից, տնտեսական զարգացվածության մակարդակից կամ էներգետիկ ռազմավարությունից, համախմբվում են՝ քննարկելու միջուկային էներգիայի խաղաղ կիրառման, միջուկային անվտանգության ապահովման և չտարածման քաղաքականության համաշխարհային օրակարգը:

Համաժողովի առանձնահատկությունն այն է, որ այն ոչ միայն ամփոփում է ԱԷՄԳ-ի տարեկան գործունեության արդյունքները, այլև ձևավորում է ապագա ուղղություններն ու առաջնահերթությունները: Այստեղ ընդունվող որոշումները և ելույթներում հնչող դիրքորոշումները մեծապես ազդում են ինչպես առանձին երկրների միջուկային քաղաքականության, այնպես էլ ամբողջ աշխարհի միջուկային էներգետիկայի զարգացման ընդհանուր ռազմավարության վրա:

69-րդ համաժողովը առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ այն տեղի է ունենում մի ժամանակահատվածում, երբ գլոբալ միջուկային էներգետիկայի ոլորտը կանգնած է նոր մարտահրավերների առջև՝ սկսած էներգետիկ պահանջարկի ավելացումից մինչև միջուկային անվտանգության միջազգային չափանիշների բարելավում: Նստաշրջանը հնարավորություն է տալիս անդամ-պետություններին ներկայացնելու իրենց հաջողությունները, քննարկելու նորագույն տեխնոլոգիաների

ներդրման ուղիները, ինչպես նաև համատեղ ձեռք բերել գիտելիքներ, փորձի փոխանակում և արդյունավետ մեխանիզմներ ստեղծել միջուկային նյութերի անվտանգ կառավարման համար:

Հայաստանի ակտիվ մասնակցությունը այս համաժողովին ընդգծում է երկրի հանձնառությունը միջուկային անվտանգության, խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի կիրառման և միջազգային համագործակցության ոլորտում: ՀԱԵԿ-ը, որպես Հայաստանի էներգետիկ համակարգի առանցքային օղակ, այս համատեքստում ստանում է միանգամայն առանձնահատուկ նշանակություն: Հայաստանի մասնակցությունը համաժողովին առանձնահատուկ նշանակություն ուներ:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ղեկավարում էր Ավստրիայի և Սլովակիայի Հանրապետություններում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանը (Վիեննայի միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցիչ): Պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ ՄԱԿԿ նախագահի տեղակալ Վահե Գրիգորյանը, «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-ՀԱԵԿ-ի տնօրեն Մովսես Վարդանյանը, «ՀԱՅԱՏՈՍ» ԳՀԻ գլխավոր տնօրեն Վահրամ Պետրոսյանը, ՀՀ մշտական ներկայացուցչության խորհրդական Արսեն Միքայելյանը և ես:

69-րդ Գլխավոր համաժողովի արդյունքները ձևավորեցին հստակ ճանապարհային քարտեզ ԱԵՄԳ-ի ապագա առաջնահերթությունների համար: Նշվեց, որ առաջիկա տարիներին գործակալության հիմնական ուշադրությունը լինելու է նորարարության խթանման, միջազգային համագործակցության խորացման և միջուկային էներգիայի անվտանգ ընդլայնման վրա:

ԱԵՄԳ գլխավոր համաժողովում հնչած յուրաքանչյուր ելույթ և հաստատված համագործակցություն կարելի է դիտարկել որպես կարևոր քայլ դեպի այն ապագան, որտեղ Հայաստանը վստահորեն կներկայանա միջուկային էներգիայի խաղաղ ու անվտանգ կիրառման համաշխարհային ընտանիքում: Իսկ Հայկական Ատոմային Էլեկտրակայանը այդ ճանապարհին հանդես է գալիս որպես վստահության և տոկունության խորհրդանիշ՝ ապահովելով մեր երկրի էներգետիկ անկախությունը և նոր սերունդների համար կայուն ու անվտանգ ապագա կառուցելու ամուր հիմքեր:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՍ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հայաստանի պատվիրակությունը համաժողովին մասնակցեց ակտիվ և նպատակային օրակարգով՝ ներկայացնելով երկրի դիրքորոշումները և առաջնահերթությունները: Նստաշրջանի առաջին օրը հայկական պատվիրակությունը մասնակցեց Գլխավոր կոնֆերանսի բացման լիազումար նիստին: Օրվա երկրորդ հատվածում պատվիրակները ներգրավվեցին կոնֆերանսի աշխատանքների շարունակական քննարկումներին:

Այս տարի ևս համաժողովի առանցքային թեմաները վերաբերում էին միջուկային էներգիայի անվտանգ և խաղաղ օգտագործմանը, միջուկային զենքերի չտարածման համակարգի ամրապնդմանը, տեխնիկական համագործակցության ծրագրերի ընդլայնմանը և միջուկային տեխնոլոգիաների ներդրման նոր հնարավորություններին:

Կայանի շահագործման ժամկետի երկարացումը, նոր միջուկային բլոկների կառուցման ծրագրերը և դրանց հետ կապված անվտանգության միջոցառումները ներկայացվեցին միջազգային հանրությանը որպես ռազմավարական առաջնահերթություններ, որոնք ուղղված են երկրի էներգետիկ անկախության, կայունության և զարգացման ապահովմանը:

Քննարկվեցին համագործակցության նոր ծրագրեր ԱԷՄԳ-ի հետ, որը ներառում է փորձագիտական առաքելություններ՝ շահագործման ժամկետի երկարացման անվտանգության գնահատման, կայանի սեյսմիկ անվտանգության բարձրացման, արտաքին իրադարձությունների ազդեցության վերլուծության և նորագույն տեխնոլոգիաների ներդրման ուղղություններով:

ԱԷՄԳ-ի գլխավոր համաժողովում Հայաստանի ներկայությունը ընդգծեց նաև այն փաստը, որ մեր երկիրը դիտարկում է միջուկային էներգիան ոչ միայն որպես էներգետիկ համակարգի ներկայիս հենասյուն, այլև որպես ապագա զարգացման ռազմավարական ուղղություն, որտեղ բարձր մակարդակի անվտանգությունն ու միջազգային համագործակցությունը համարվում են առաջնահերթություն:

Համաժողովի երկրորդ օրը բացի լիազումար նիստերից, տեղի ունեցան մի շարք կարևոր երկկողմ հանդիպումներ: Հայկական պատվիրակությունը հանդիպեց Վրաստանի միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահ Նինո Ուտիաշվիլիի հետ: Հանդիպման ընթացքում մանրամասն քննարկվեցին երկու երկրների կարգավորող մարմինների միջև համագործակցության արդյունավետ ուղիները, լավագույն փորձի փոխանակման հնարավորությունները, ինչպես նաև միջուկային անվտանգության ապահովման համատեղ նախաձեռնություններն ու քայլերը: Պատվիրակությունը առանձնացրեց երկարաժամկետ համագործակցության կարևորությունը՝ տարածաշրջանում միջուկային անվտանգության բարձր մակարդակը պահպանելու նպատակով:

ԱԷՄԳ-ի երաշխիքների պահպանման դեպարտամենտի ղեկավարության հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին մի շարք կարևոր հարցեր: ԱԷՄԳ ներկայացուցիչները ուշադրություն հրավիրեցին ՀԱԷԿ-ի աշխատած միջուկային վառելիքի պահման ավագաններում ջրի թափանցելիության խնդրին, ինչպես նաև անդրադարձան աշխատած վառելիքը չոր պահեստարան տեղափոխելու առաջիկա ծրագրերին: Քննարկվեցին նաև ԱԷՄԳ տեսուչների կողմից ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի պահման ավագանում իրականացվող ստուգումների կազմակերպման դժվարությունները: Տեղեկացվեց, որ 2026 թվականի հունվարից ԱԷՄԳ-ի տեսչական ստուգումների քանակը կավելանա:

Հայկական կողմը ներկայացրեց իր քայլերը, որոնք վերաբերում են պահման ավագաններում ջրի մաքրման նպատակով նոր ֆիլտրերի ձեռքբերմանը: Քննարկման արդյունքում պայմանավորվեց, որ Հայաստանը սահմանված կարգով ԱԷՄԳ-ին կհաղորդի թարմացված տվյալներ՝ կապված աշխատած վառելիքի նոր պահեստարանի կառուցման, ինչպես նաև նոր էներգաբլոկի կառուցման հնարավոր ծրագրերի վերաբերյալ:

Եվրոպական Հանձնաժողովի ներկայացուցիչների հետ տեղի ունեցավ հանդիպում:

Քննարկվել են ԵՀ հետ ընթացիկ և նախապատրաստական փուլում գտնվող ծրագրերը, ինչպես նաև նոր ծրագրի մշակման անհրաժեշտությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել Հայաստանի սթրես-թեստի ազգային միջոցառումների պլանի իրականացման ընթացքին: ԵՄ պատվիրակությունը մտահոգություն է հայտնել նոր միջուկային էներգաբլոկի համար ընտրված հարթակի սեյսմիկ ռիսկերի վերաբերյալ: Հայկական կողմը ներկայացրել է, որ հարթակի լիցենզավորման, նախագծի ընտրության և տեխնիկական առաջադրանքի մշակման գործընթացում պարտադիր հաշվի են առնվելու հարթակի բոլոր բնութագրերը՝ ներառյալ սեյսմիկ անվտանգությունը՝ հիմնված ՀՀ օրենսդրության, ազգային պահանջների և ԱԷՄԳ ուղեցույցերի վրա:

Բացի այդ, հայկական կողմը տեղեկացրել է, որ ԱԷՄԳ փորձագետները դիտարկում են «ՀՀ կառավարության որոշումը միջուկային նոր էներգաբլոկի հրապարակի անվտանգության պահանջները» փաստաթղթի վերանայված տարբերակը: Նախատեսվում է նաև ԱԷՄԳ մասնագետների մասնակցությամբ աշխատաժողով, որի ընթացքում կներկայացվեն հարթակի ուսումնասիրության և պահանջների վերաբերյալ նյութերը, ինչպես նաև նախապատրաստական քայլերը՝ «Հարթակի և արտաքին ազդակների նախագծի վերլուծություն» առաքելության իրականացման համար: Վերջինս նպատակահարմար է իրականացնել մինչև հարթակի լիցենզավորման գործընթացը:

Հանդիպում ունեցանք նաև ԱՄՆ էներգետիկայի քարտուղարի՝ միջուկային էներգիայի հարցերով փոխտեղակալ Մայքլ Գոֆֆի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվեցին ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի անվտանգության բարձրացման գործող ծրագրերն ու նոր միջուկային էներգաբլոկների կառուցման նախաձեռնությունը: Շեշտվեց անվտանգության հետագա ամրապնդման համար նոր ծրագրերի մշակման կարիքը:

Ներկայացվեց նաև Հայաստանի և ԱՄՆ միջև 123 համաձայնագրի ստորագրման ընթացքը: Ամերիկյան կողմը տեղեկացրեց, որ համաձայնագրի կնքումից առաջ արդեն հանվել է ՓՄՌ նախագծողների նկատմամբ տեխնոլոգիաների արտահանման վերահսկողությունը (Export Control), ինչը թույլ է տալիս Հայաստանին ազատ և առանց լրացուցիչ սահմանափակումների համագործակցել ՓՄՌ նախագծողների հետ:

Երրորդ օրը ազգային ելույթով հանդես եկավ Ավստրիայի և Սլովակիայի Հանրապետություններում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանը: Իր խոսքում դեսպանը մանրամասն անդրադարձավ Հայաստանի ջանքերին՝ ուղղված միջուկային էներգետիկայի անվտանգության բարձրացմանը, ՀԱԷԿ-ի երկարաժամկետ և հուսալի շահագործման ապահովմանը: Նա ընդգծեց, որ Հայաստանը մեծ կարևորություն է տալիս ԱԷՄԳ-ի հետ շարունակական համագործակցությանը, մասնավորապես՝ փորձագիտական առաքելությունների ընդունման, տեխնիկական աջակցության և կարողությունների զարգացման ծրագրերի շրջանակում:

Դեսպանը նշեց նաև Հայաստանի անշեղ հանձնառությունը միջազգային միջուկային անվտանգության և ոչ տարածման ռեժիմների հանդեպ՝ ընդգծելով, որ միջուկային էներգետիկան շարունակում է առանցքային դեր ունենալ երկրի էներգետիկ

անկախության, տնտեսության կայուն զարգացման և շրջակա միջավայրի պաշտպանության գործում: Ելույթի ավարտին նա վերահաստատեց Հայաստանի պատրաստակամությունը շարունակելու սերտ համագործակցությունը ԱԷՄԳ-ի և գործընկեր երկրների հետ՝ համատեղ քայլեր ձեռնարկելով խաղաղ և անվտանգ միջուկային էներգետիկայի զարգացման ուղղությամբ:

Հանդիպում տեղի ունեցավ ԱԷՄԳ Արտաքին ազդակների անվտանգության բաժնի ղեկավարի հետ:

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց ԱԷՄԳ ազգային ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքներին: Մասնավորապես, ներկայացվեց «ՀՀ կառավարության որոշումը միջուկային նոր էներգաբլոկի (էներգաբլոկների) հրապարակի անվտանգության պահանջները» փաստաթղթի վերանայված տարբերակի դիտարկման ընթացքը ԱԷՄԳ փորձագետների կողմից: Տեղեկացվեց, որ համապատասխան հաշվետվությունը պատրաստ կլինի 2025 թվականի հոկտեմբերին: Կողմերը պայմանավորվեցին 2026 թվականի առաջին եռամսյակում կազմակերպել ազգային աշխատաժողով, որի ընթացքում կներկայացվեն հարթակի ուսումնասիրության և բնութագրերի նկատմամբ դրվող պահանջները: Բացի այդ, ԱԷՄԳ փորձագետների մասնակցությամբ կքննարկվեն «Հարթակի և արտաքին ազդակների նախագծի վերլուծություն» առաքելության նախապատրաստական քայլերը: Հետագայում նախատեսվում է նաև իրականացնել ԱԷՄԳ նշված առաքելությունը:

Մեր պատվիրակությունը մասնակցեց մի շարք կարևոր հանդիպումների՝ կապված միջուկային անվտանգության և ՀԱԷԿ-ի երկարաժամկետ զարգացման ծրագրերի հետ: Աշխատանքային հանդիպում ունեցանք ԱԷՄԳ միջուկային ապահովության դեպարտամենտի ներկայացուցիչ Պաոլո Կոնտիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց Հայաստանում 2026 թվականի առաջին կեսին նախատեսվող աշխատաժողովի կամ SEED վերանայման առաքելության կազմակերպման հնարավորությունը՝ փոքր մոդուլային ռեակտորների (SMR) տեղակայման հարթակի գնահատման նպատակով: Անդրադարձ կատարվեց նաև տեխնիկական չափանիշներին, գնահատման մեթոդաբանությանը, հնարավոր ռիսկերին և վերահսկողության գործընթացներին, ինչպես նաև ծրագրի շրջանակներում միջազգային փորձի ներգրավման կարևորությանը:

Քննարկումներ ունեցանք Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ: Մեր պատվիրակությունը քննարկեց ՀԱԷԿ-ի անվտանգության բարձրացմանն ուղղված երկարաժամկետ և բարդ միջոցառումների իրականացմանն ուղիները: Քննարկման ընթացքում շեշտադրվեց անհրաժեշտ ներդրումների, տեխնիկական աջակցության, փորձի փոխանակման և համագործակցության պլանավորման կարևորությունը՝ ուղղված գործող ռիսկերի նվազեցմանը և կայանի անվտանգության ամենաբարձր մակարդակի ապահովմանը:

Այս հանդիպումների արդյունքում հաստատվեցին կոնկրետ քայլեր և նախանշվեցին հետագա համագործակցության ուղղությունները՝ ներառյալ միջազգային փորձագետների ներգրավումը, տեխնիկական գնահատումների համակարգումը և

ծրագրերի իրականացումը ամուր ժամանակացույցի և արդյունավետ մոնիթորինգի ներքո:

Նստաշրջանի չորրորդ օրը հայկական պատվիրակությունը մասնակցեց մի շարք կարևոր միջոցառումների: Օրվա առաջին մասում կայացավ Կարգավորող մարմինների տարեկան հանդիպումը (VIC), որի ընթացքում քննարկվեցին միջուկային կարգավորման համաշխարհային միտումները, ազգային փորձի փոխանակման ուղիները և համագործակցության նոր հարթակները:

Այնուհետև պատվիրակությունը ունեցավ աշխատանքային քննարկում ԱԷՄԳ երաշխիքների դեպարտամենտում, որտեղ Հայաստանի պատվիրակության կազմում՝ ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն, Հայկական ԱԷԿ-ը և ՀՀ մշտական ներկայացուցչությունը, շեշտադրեցին երաշխիքային միջոցառումների արդյունավետության բարձրացման և հետագա համագործակցության կարևորությունը:

Օրվա ընթացքում շարունակվեց նաև Գլխավոր կոնֆերանսի աշխատանքը, իսկ Բոլորի Կոմիտեում (CoW) ընթացան բանաձևերի նախագծերի շուրջ քննարկումները (BR-A):

Հայկական պատվիրակությունը ոչ միայն հետևեց ընթացիկ աշխատանքներին, այլև ակտիվորեն ներգրավվեց բանաձևերի ձևակերպումների շուրջ ընթացող բանակցություններում՝ ներկայացնելով Հայաստանի տեսակետները և կարևորելով անվտանգության, միջուկային էներգիայի խաղաղ կիրառման ու միջազգային համագործակցության հարցերը:

Նստաշրջանի վերջին օրը հայկական պատվիրակությունը մասնակցեց Գլխավոր կոնֆերանսի եզրափակիչ նիստերին, որտեղ ամփոփվեցին ամբողջ նստաշրջանի ձեռքբերումներն ու քննարկումները, վերլուծվեցին հիմնական ուղենիշներն ու եզրահանգումները, և հաստատվեցին ԱԷՄԳ-ի ապագա առաջնահերթությունները՝ նորարարության, անվտանգ ընդլայնման և միջազգային համագործակցության ոլորտներում: Այս ամփոփիչ նիստը ևս մեկ անգամ ընդգծեց միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման կարևորությունը, ինչպես նաև Հայաստանի ու միջազգային գործընկերների վճռականությունը՝ ապահովելու անվտանգ, պատասխանատու և կայուն զարգացման ուղիները:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՈւՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ԱԷՄԳ-ի կողմից առաջարկվող տեխնիկական համագործակցության ծրագրերը թույլ են տալիս հայ մասնագետներին զարգանալ միջազգային չափանիշներին համապատասխան, յուրացնել ժամանակակից տեխնոլոգիաներ, մասնակցել առաջադեմ ուսուցողական ծրագրերի և ձեռք բերել փորձ՝ կենտրոնացած ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործման ապահովման վրա: Այս համագործակցությունը նպատակաուղղված է ինչպես գործող բլոկների արդյունավետ և անվտանգ շահագործման, այնպես էլ ապագա նոր միջուկային էներգաբլոկների կառուցման համար անհրաժեշտ գիտելիքների և փորձի համալրմանը:

Կայանի շահագործման ժամկետի երկարացումը, նոր միջուկային բլոկների կառուցման ծրագրերը և դրանց հետ կապված անվտանգության միջոցառումները ներկայացվեցին միջազգային հանրությանը որպես ռազմավարական առաջնահերթություններ, որոնք ուղղված են երկրի էներգետիկ անկախության, կայունության և զարգացման ապահովմանը:

2025 թվականին նախատեսվում է իրականացնել մի շարք կարևոր միջոցառումներ՝ ԱԷՄԳ-ի և ՀԱԷԿ-ի համագործակցության շրջանակում: Դրանց թվում են՝ ԱԷՄԳ-ի փորձագիտական առաքելություն շահագործման ժամկետի երկարացման անվտանգության ասպեկտների վերաբերյալ, SALTO առաքելություն կայանի հարթակի նախագծման և արտաքին իրադարձությունների ազդեցության գնահատման ուղղությամբ, ինչպես նաև գործընկերային այց՝ շարունակական կատարելագործման ծրագրի շրջանակում: Բացի այդ, 2026 թվականին նախատեսվում է իրականացնել ԱԷՄԳ-ի հերթական փորձագիտական առաքելություն՝ ուղղված կայանի սեյսմիկ անվտանգության բարձրացմանը:

ՀԱԷԿ-ի դերը գլխավոր համաժողովում կարելի է դիտարկել նաև որպես Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդում միջուկային էներգետիկայի ոլորտում: Մեր երկիրը ներկայանում է որպես պատասխանատու գործընկեր, որը ոչ միայն հետևողականորեն իրականացնում է ԱԷՄԳ-ի պահանջները և ստանդարտները, այլև ակտիվորեն մասնակցում է միջազգային օրակարգի ձևավորմանը: Սա թույլ է տալիս Հայաստանին ունենալ իր ձայնը համաշխարհային քննարկումներում, ներկայացնել սեփական առաջնահերթությունները և ստանալ միջազգային աջակցություն կարևորագույն ծրագրերի իրականացման համար:

69-րդ գլխավոր համաժողովի ընթացքում մեր պատվիրակության ակտիվ ներգրավվածությունը ևս մեկ անգամ հաստատեց, որ մեր երկիրը դիտարկում է միջուկային էներգիան ոչ միայն որպես ներկա էներգետիկ համակարգի հենասյուն, այլև որպես ապագա զարգացման ռազմավարական ուղղություն: ՀԱԷԿ-ի ներկայությունը և մասնակցությունը համաժողովին դարձավ այն հարթակը, որտեղ ամրապնդվեցին համագործակցության կապերը ԱԷՄԳ-ի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի և այլ գործընկերների հետ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱԷՄԳ-ի 69-րդ գլխավոր համաժողովի ավարտը ևս մեկ անգամ ապացուցեց, որ Հայաստանը, լինելով փոքր պետություն, ունի մեծ առաքելություն և պատասխանատվություն միջուկային էներգետիկայի համաշխարհային ընտանիքում: Մեր երկրի ակտիվ ներգրավվածությունը ոչ միայն վկայում է Հայաստանի հանձնառության մասին՝ շարունակելու խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի զարգացումը, այլև ընդգծում է այն հավատը, որ ապագան պետք է կառուցվի անվտանգության, համագործակցության և վստահության հիմքի վրա:

Հայկական Ատոմային Էլեկտրակայանը, որպես Հայաստանի էներգետիկ կայունության և անկախության խորհրդանիշ, ներկայանում է միջազգային հարթակներում ոչ միայն որպես ազգային հպարտություն, այլև որպես գործընկեր, որի փորձն ու հաստատակամությունը գնահատվում են աշխարհի առաջատար կառույցների կողմից: Այսօր ՀԱԷԿ-ը դառնում է այն կամուրջը, որը կապում է անցյալի ձեռքբերումները ապագայի հնարավորությունների հետ՝ ապահովելով մեր երկրի համար էներգետիկ անվտանգություն և զարգացման նոր հեռանկարներ:

Հայաստանի պատվիրակության մասնակցությունը համաժողովին գնահատվեց բարձր արդյունավետությամբ: Քննարկումները և բանակցությունները ընթացան առողջ և կառուցողական մթնոլորտում, նպաստեցին գործընկերային կապերի ամրապնդմանը և նոր պայմանավորվածությունների ձեռքբերմանը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն



Է. Մարտիրոսյան